

# ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԱՐՑԱԽՈՒՄ

## ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետությունը զբաղեցնում է պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկի՝ Արցախի, հարավ-արևմտյան մասը: Արցախը Մեծ Հայքի 10-րդ նահանգն էր ու ամենաընդարձակ նահանգներից մեկը, որն ունեցել է 11.5 հազար քառ. կմ տարածք, մոտավորապես այնքան ինչքան որ ունի այժմ:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում իր քաղաքական կյանքի տարբեր հանգամանքներում տարբեր կերպ է կոչվել Արցախը:

Սեպագրերի մեջ և միջնադարյան հեղինակների երկերում Արցախը կոչվել է «Արդախ», «Ուրտեխե», «Ծավդեից աշխարհ», «Արծախ», հաջորդ շրջանի պատմագրության մեջ՝ X-XIII դարերում «Առան», «Արևելք», «Արևելից կողմանք», «Աղվանից կողմանք», «Աղվանք», «Խաչեն», իսկ սկսած XIV դարի վերջից՝ «Ղարաբաղ»:

Ռեարտական կամ Արարատյան հայկական թագավորության երկու գահակալները՝ Արգիշտի I-ի որդի Սարդուրի II-ն ու վերջինիս որդի Ռուսա I-ը մ.թ.ա. VIII դարում արձանագրել են, որ իրենք դեպի հյուսիս և հյուսիս-արևելք կատարած արշավանքներով իրենց պետությանն են միացրել նոր երկրամասեր, որոնց հետ է եղել նաև Արդախ-Արցախը սեպագրերում՝ «Ուրտեխե» կամ «Ադախունի»:

Հին հունական, հռոմեական, ինչպես նաև միջնադարյան հայ պատմիչների վկայությամբ՝ հնուց ի վեր Արցախը կազմել է Մեծ Հայքի անքակտելի մասը: Այդ իրողությունը հավաստող փաստագրական հարուստ նյութեր և տեղեկություններ են պահպանվել Ստրաբոնի, Պլուտարքոսի, Պտղոմեոսի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Փավստոս Բուզանդի և հայ ու օտարազգի բազում այլ պատմիչների գործերում, որտեղ ամենայն բարեխղճությամբ ցույց է տրված, որ Հայաստանը, ավելի ճիշտ Մեծ Հայք պետությունը, տարածված է հայաբնակ մի ընդարձակ տարածքի վրա, որի հյուսիսային սահմանն անցնում է Կուր գետի ընթացքով:

Արցախի մասին վկայող առաջին օտար հեղինակը հույն մեծ աշխարհագետ Ստրաբոնն է (մ.թ.ա. 63 – մ.թ. 23թթ.), որն իր «Աշխարհագրություն» հայտնի աշխատության մեջ, խոսելով Մեծ Հայքի մասին, մի ուշագրավ տեղեկություն է հաղորդում նրա կազմի մեջ մտնող Արցախի մասին: Ասում է՝ Օրխիստինան, նա Արցախն այդպես է անվանում, բարեբեր երկիր է և պատերազմների ժամանակ հանում է ամենամեծաքանակ հեծելազորը:

Հայոց պատմահայր Մովսես Խորենացու հաղորդման համաձայն՝ մ.թ.ա. II դարում Մեծ Հայքի թագավոր Վաղարշակի (մ.թ.ա. 134 – 112թթ.)<sup>1</sup> հրամանով Հայկ նահապետի սերունդներից Առան անունով մեկը, որ առաջինն էր բոլոր մտավորական և հանճարեղ գործերում, Մեծ Հայքի հյուսիս-արևելյան հայ բնակչության վրա նշանակվեց կողմնակալ<sup>2</sup>: Առանից սկիզբ առած նախարարական տները պարսկական տիրապետության ժամանակ, պարսկերենի ազդեցությամբ սկսեցին կոչվել Առանշահիկ, որ նշանակում է «Առանի շահիկ-տիրակալ»: Մինչև ուշ միջնադար Արցախի և Ուտիքի իշխանական տների ներկայացուցչներն իրենց Առանշահիկներ էին անվանում, այսինքն՝ Առան նահապետից սերված իշխաններ: Ու Առանից սկսած, նրա ժառանգների իշխանությունը հայոց Արցախ և Ուտիք նահանգներում երկու հազարամյակ շարունակ տիրել է անընդմեջ: Թերևս այս առումով Արցախի պատմությունը եզակի երևույթ է համայն մարդկության պատմության մեջ:

Մ.թ.ա. I դարում Արցախը գտնվում էր Հայոց Տիգրան Մեծ արքայի ստեղծած Առաջավոր Ասիայի աշխարհակալության կազմում: Ասվածի վառ ապացույց են հանդիսանում Տիգրան

<sup>1</sup> Բակուր Կարապետյան, Գյուլիստան նամե, Մեծ Կուանք, գ. I, Երևան, 2005թ., էջ 13:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981թ., էջ 127-129:

արքայի կառուցած Տիգրանակերտ քաղաքի ավերակները, որի հետքերը հայտնաբերվել են 2005թ. Արցախում հայ հնուտ մասնագետների կողմից:

Ա.թ. I դարից մինչև V դարի սկիզբը Արցախը գտնվել է հայոց Արշակունիների թագավորության կազմում: Եթե մենք ուշադրություն դարձնենք այն պատմական իրողությանը, թե ինչ հարևանների հետ էր ստիպված ապրել Հայաստանը՝ դեռևս մ.թ. I հարյուրամյակից սկսած, ապա պարզ կդառնա, որ նրա պետական-քաղաքական գոյությանը մեծ վտանգ էր սպառնում մշտապես: Մի կողմից հռչակավոր Բյուզանդական կայսրությունը, մյուս կողմից ոչ պակաս ռազմատենչ Պարսկաստանը փորձում էին իրար ձեռքից խլել Հայաստանին տիրանալու նախաձեռնությունը:

IV դարի վերջը՝ 387թ.-ը, վերջակետ դրեց այդ մրցակցությանը: Հայաստանը կիսվեց երկու հպատակ մասի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Այդ նույն IV դարում էլ վերացավ հայոց թագավորությունը Բյուզանդապատկան մասում, իսկ քիչ անց՝ V դարի սկզբում՝ 428թ. նաև պարսկահպատակ Հայաստանում: Արցախը, ինչպես և ողջ Արևելյան Հայաստանը, հայտնվեց պարսկական գերիշխանության տակ: Բայց կար մի էական հանգամանք:

Այդ շրջանում պարսկական դիվանագիտական միտքը հղացավ մարզպանությունների գաղափարը, որը և կիրառվեց Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի, այսինքն Կուր գետի ձախափնյա տարածքի, նկատմամբ: Արցախը բաժանվեց Հայաստանից, կտրվեց նրանից ու որպես առանձին միավոր, Ուտիք նահանգի հետ միասին, կցվեց Կուր գետի ձախափնյակում գտնվող բուն Աղվանքին:

Զնայած Արցախը հայտնվեց բուն Աղվանքի վարչական կազմում, սակայն ոչ միայն իր կապը չկտրեց հայրենիքի հետ, այլև շատ շուտով, առաջին իսկ համահայկական ընդվզման պահին, անմիջապես արձագանքեց ու միացավ ապստամբած հարազատ ժողովրդին: Դա տեղի ունեցավ 451թ.-ին, Ավարայրի դաշտում, ուր փոքրաթիվ հայկական զորքը, միավորվելով Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի շուրջը, քաջության ու հերոսության հրաշքներ գործեց՝ ընդվզելով պարսկական բռնակալության դեմ, որը փորձեց՝ դավանափոխ անելով հայ ժողովրդին, զրկել նրան քրիստոնեական հավատից, վերջնականապես ծնկի բերել և այդպիսով լուծել Հայաստանի հարցը:

Այս ճակատամարտը ցույց տվեց, որ չնայած պարտությանը՝ հայերը երբեք չեն հանդուրժի ոչ մի բռնություն իրենց սուրբ հավատի հանդեպ՝ կկոտորվեն, բայց չեն ուրանա այն: Պարսկաստանը ստիպված էր անհրաժեշտ հետևություններ անել և որոշակի ազատություններ տալ հայկական եկեղեցուն ու նախարարներին: Ազատությունը տարբեր դրսևորումներ ունեցավ Պարսկաստանի կազմում հայտնված տարբեր մարզերի համար:

Ինչ վերաբերում է Աղվանից մարզպանության ներսում հայտնված Արցախին, ապա այստեղ հայերը գնացին ավելի առաջ: Առանշահիկների նախարարական տոհմը, օգտվելով ստեղծված բարենպաստ քաղաքական իրավիճակից, անցավ իշխանության գլուխ և հիմք դրեց Արցախի Առանշահիկների տոհմի թագավորությանը: Այդ թագավորական տան առաջին ներկայացուցիչը Վաչագանն էր, որը պատմության մեջ հայտնի է Վաչագան Բարեպաշտ անունով՝ քաջարի, իմաստուն, հնուտ ու վայելուչ մի անձնավորություն, ով կարողացավ այդ արժանիքներն ի սպաս դնել Հայրենիքի բարգավաճման ու նրան ծառայեցնելու սուրբ գործին:

Ինչ վերաբերում է պատմական փաստերին, ապա, ըստ Վաչագանին թագադրել է հենց ինքը պարսից արքայից արքա Վաղարշը: Եվ ոչ միայն թագադրել, այլև տվել է բացառիկ լիազորություններ, ինչը հաստատում է VII դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատության մեջ:

Վաչագան թագավորը տեր էր կանգնել երկար տարիներ պարսկական բռնակալության տակ մնացած մի երկրի: Խարխլված էին Արցախի ոչ միայն պետական, այլև հասարակական, մշակութային ու բնականոն կենսագործունեության համար շատ կարևոր մյուս հիմքերն ու կառույցները: Այդ ամենը պետք էր վերստեղծել, համակարգել, ամրացնել ու նոր կյանք տալ: Այլ

խոսքերով ասած, Արցախի նորաթուխ թագավորությանը անհրաժեշտ էին օրենքներ, որոնք ի մի կբերեին այդ ամենն ու հնարավորություն կտային ապրել կյանքի բնական հունով: Եվ ահա, 488թ. մայիսի 1-ին, Վաչագան թագավորը, այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Գյուլիստան գյուղում, որն այժմ գտնվում է Ադրբեջանի ռազմակալման տակ, հրավիրել է բազմաբյուր ատյան, որը և ընդունել է օրենքների հիմնարար մի ժողովածու, որը պատմության մեջ հայտնի է «Սահմանադրություն կանոնական» անունով, իսկ ժողովրդի շրջանում՝ Վաչագան թագավորի օրենքները կամ կանոնները արտահայտությամբ:

Ըստ էության, սա մինչև մեր օրերը պահպանված աշխարհի առաջին Սահմանադրությունն է, որը բաղկացած է 21 օրենքներից և որն, արդեն, ավելի քան, 1500 տարեկան է: Սահմանադրության շնորհիվ կանոնակարգվեցին ու սահմանվեցին ոչ միայն եկեղեցական դասի տարբեր աստիճանի ներկայացուցիչների փոխհարաբերությունները, այլև բոլոր խավերին պատկանող մարդկանց համար պարտադիր հասարակական նորմերն ու իրավունքները՝ թագավորից մինչև շինական: Օրենքը պարտադիր էր բոլորի համար, և Առանշահիկների թագավորական տոհմը ներկայացնող արքայազունք կամ թագավորազունք, այսինքն՝ երկրի տիրակալները, ոչ մի արտոնություն չունեին այդ առումով ու պարտավոր էին մյուսների նման կատարել իրենց պարտավորությունները պետության առջև: Հավասարության նշան դնելով ազնվականի ու շինականի միջև՝ պետության առջև ունեցած պարտավորությունների կատարման առումով, Վաչագան արքան, հիրավի, իմաստուն տիրակալի սրտացավությամբ ու մտահոգությամբ, կատարել է արդար հասարակարգ ստեղծելուն միտված բացառիկ մի քայլ, որին, այդ ժամանակ, քչերն էին ընդունակ: Այս իմաստով պատահական չպետք է համարել մեր օրերում հայության և մասնավորապես արցախահայության օրինական պահանջներն ու հավակնություններն աշխարհին ներկայացնելու ձգտումները: Պատմությունը ցույց է տալիս, որ Արցախում օրենքի տառին հետևելն ու օրինապաշտությունը փոխանցվել է սերնդեսերունդ:

Այժմ շարունակենք մեր ճանապարհորդությունը դարերի միջով:

X-XIII դարերում Արցախը հայտնի էր Խաչեն անունով, կապված լեռնաշխարհում հայտնի Խաչեն գավառի գորեղ իշխանության անվան հետ: Խաչենում է, որ XII դարում հայ մեծ իրավագետ Մխիթար Գոշը գրել է հայոց ազգային օրենքների առաջին ժողովածուն՝ «Հայոց Ղատաստանագիրք»-ը: Ինչպես վկայում են պատմական անթիվ փաստերը, հետագա բոլոր դարերում Արցախի իշխանները անսխալ ուղղությամբ են վարել Ղատաստանագիրքի պատվիրանները: Նույնիսկ պատերազմական իրավիճակներում, անգամ ռիսերիմ թշնամու հետ նրանք առայսօր ձգտում են պահպանել օրենքի պահանջը: Այդպիսի խոր արմատներ ունեցող իրավական գիտակցությունն, անկասկած, կարևոր դեր է կատարել երկրամասի անկախությունը պահպանելու, սահմանափակ ուժերով, բայց առավել, կազմակերպված ու արդյունավետ կերպով բոլոր փորձություններին դիմակայելու գործում: X դարի բյուզանդական կայսր և պատմիչ Կոստանդինը, թվարկելով Հայաստանի պետական այն կարևորագույն միավորումները, որոնց հետ բյուզանդական արքունիքը շփումներ ուներ, հիշատակում է նաև Խաչենի իշխանությունը:

Խաչենի իշխանությունը բավականին լուրջ դերակատարություն է ունեցել նաև բովանդակ Հայաստանի արտաքին կապերի ձևավորման գործում: XIII դարում աշխարհի տարբեր ծագերում մահ ու սարսափ էր տարածում թաթար-մոնղոլների առաջնորդ Չինգիզ խանը: Հերթական պետությունը, որ պիտի հրի ու սրի մատնվեր նրա հետնորդների կողմից, դա Կիլիկյան Հայոց թագավորությունն էր: Թաթար-մոնղոլները պատրաստվում էին հարձակում գործել Կիլիկյան թագավորության վրա: Ահա հենց այս շրջանում էլ իր դիվանագիտական տաղանդն է ցուցաբերում XIII Խաչենի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլան, որի անմիջական միջնորդությամբ տեղի ունեցած հայ-մոնղոլական բարձր մակարդակի բանակցությունների արդյունքում Կիլիկիայի թագավոր Հեթում I-ի (1226-1270թթ.) ու թաթար-մոնղոլների միջև

ստեղծվեց բարեկամական հարաբերություն, և Կիլիկիան փրկվեց հարևան երկրներին վիճակված ավերածություններից<sup>3</sup>:

Թաթար-մոնղոլական, թյուրքական բազմաթիվ վաչկատուն հետամնաց ցեղերի պարբերաբար կրկնվող արշավանքների հետևանքով Արցախ-Խաչենի հզոր իշխանությունը մանրատվեց՝ XV դարի երկրորդ կեսից սկսած վերածվելով ռազմաքաղաքական նոր կազմավորումների՝ մելիքությունների, որը պատմության մեջ հայտնի է նաև Խամսայի մելիքություններ: Ասեն, որ «Խամսա»-ն արաբական ծագում ունեցող բառ է, որ նշանակում է հինգ՝ այսինքն, հինգ մելիքություններ: Հարկ է նշել, որ Արցախի բնիկ իշխանները, որպես մելիքներ, հատուկ հրովարտակներով ճանաչվել են ժամանակի միջազգային հարաբերություններում ծանրակշիռ դերակատարություն ունեցող այնպիսի պետության կողմից, ինչպիսին Պարսկաստանն էր:

XVI դարից սկսած ողջ Անդրկովկասը, այդ թվում և Արցախը, դառնում է Թուրքիայի և Պարսկաստանի միջև մղվող ահեղ պատերազմների թատերաբեմ: Գրեթե 140 տարի տևած պատերազմները, որոնք հաջողություն էին բերում մերթ կռվող մի կողմին, մերթ՝ մյուս, ավարտվեցին 1639թ. Կոստանդնուպոլսում կնքված թուրք-պարսկական հաշտության պայմանագրով, որի համաձայն Հայաստանը բաժանվեց երկու մասի՝ Արևմտյան Հայաստանն անցավ Թուրքիայի տիրապետության տակ, իսկ Արևելյան Հայաստանը, այդ թվում նաև Արցախը անցավ Պարսկաստանին: Չնայած այս ամենին, ամբողջ Արցախում հարատևում էր հայ կյանքը՝ որպես ամբողջություն՝ լինելով հայ եկեղեցու մեկ միասնական թեմ: Իսկ ժողովուրդն էլ ապրում էր իր բնիկ տերերի իշխանության ներքո, որոնք մելիքներ էին կոչվում: Մելիքները միշտ ունենում էին գահերեց և դա պահում էր երկրամասի վարչական ամողջականությունը:

Իբրև պետական կազմավորումներ Արցախի հինգ մելիքություններն իրենց գոյության ավելի քան 370 տարիների ընթացքում թե՛ արևմտավրոպական երկրների, թե՛ ռուսաց արքունիքներ հղած դիմումների մեջ ներկայանում էին որպես «Հայոց թագավորների ազնիվ զինվորների ժառանգներ»<sup>4</sup>: Մելիքները, լինելով ինքնիշխան ու անկախ իրենց տիրույթներում, առաջնորդվելով սովորության իրավունքի նորմերով, իրականացնում էին հետևյալ գործառույթները, որոնք բնորոշ են պետությանը՝ 1. հավաքել են հարկեր, 2. ունեցել են զինված ուժեր, 3. կատարել են դատ, 4. պահպանել են կարգուկանոն: Մելիքներից յուրաքանչյուրը գավառական մի փոքրիկ թագավոր էր՝ ներքին կյանքի կազմակերպման ու կառավարման բոլոր հատկանիշներով: Եվ այն, որ նրանցից մեկը գերագահ էր ճանաչվում պարսից շահի կողմից, հարկերը հանձնում արքունիքին, հիշեցնում էր հին հայկական թագավորության դաշնային տիպի կառուցվածքը, որն առկա էր նաև 11-13-րդ դարերում:

XVII դարի վերջից սկսած հայ ազատագրական միտքը զարթոնք է ապրում՝ նպատակ ունենալով ազատագրվել պարսկա-օսմանյան տիրապետությունից և վերականգնել հայկական միասնական պետականությունը: Իսկ պետականության վերականգնման համար անհրաժեշտ նախադրյալներ, այն է՝ ռազմական, քաղաքական ուժեր, պահպանվել էին Հայաստանի եզակի շրջաններում, հիմնականում Արցախում և մասամբ էլ Սյունիքում: Արցախի մելիքությունները չափազանց կարևոր տեղ էին զբաղում Անդրկովկասի դեռևս ֆեոդալական ֆորմացիայում գտնվող ժողովուրդների ռազմա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում: Նրանց հետ հաշվի էին նստում ոչ միայն ներքին, այլև արտաքին ուժերը:

Հիշյալ ժամանակահատվածում Պարսկաստանն ապրում էր ներքին ու արտաքին քաղաքական ծանր ժամանակներ և ի վիճակի չէր տերության ծայրամասերում ամուր պահելու իր իշխանությունը: Օգտվելով դրանից՝ Օսմանյան Թուրքիան ու Ռուսաստանը ձգտում էին տեր դառնալ թուլացած Պարսկաստանի անդրկովկասյան ու Կասպից ծովի առափնյա տարածքներին: Այդ հզոր պետությունների շահերի բախման հանգույցում գտնվող հայերը

<sup>3</sup> Բագրատ Ռիլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975թ., էջ 195:

<sup>4</sup> Αδὶ ὅϊ ἰ -δοῦνῆεά ἰ ὀί ἰ ὀάϊ εἶ ἄ XVIII ἀεῖά, ἡά ἰ ὀί εἶ ἂϊ εἶ ὀί ἂϊ ὀί ἂ, ὀ. IV, Ἀδᾶἂἂ, 1990ἂ., ἡ. 179.

միայնակ չէին կարող ձեռք բերել ու պահպանել պետական անկախություն: Անհրաժեշտ էր այնպիսի զորեղ դաշնակից, որի շահերին համահունչ լինեին հայերի ազատագրական ձգտումները: Այդպիսի դաշնակից հանդիսացավ հավատակից Ռուսաստանը, որը ձգտում էր օգտագործել Արցախի մելիքների ռազմական ուժերը՝ Պարսկաստանին ենթական մերձկասայան ու անդրկովկասյան տարածքներում հաստատվելու համար, որպեսզի իր ձեռքում պահեր Արևելքից դեպի Եվրոպա ձգվող «մետաքսի ճանապարհը»:

Ցանկանալով համոզվել մելիքների ունեցած կարողությունների ու հնարավորությունների մեջ՝ Ռուսաց կայսր Պետրոս I-ը հատուկ պատվիրակ է ուղարկում Արցախ: Վերջինս լինելով Արցախում տեսնում և համոզվում է, որ ամեն կերպ պետք է օգնել հայերին, որոնք ռազմական ու տնտեսական մեծ հնարավորություններ ունեն: Մելիքները կարող են մինչև 40 հազարանոց լավ զինված զորք դուրս բերել, երկիրը հարուստ է մետաղահանքերով, որտեղ կարելի է գնքի, մանավանդ հրազենի արտադրություն ծավալել: Ռուսաց պատվիրակը զգարմացած գրել է, որ այդպիսի կռվող ժողովուրդ, ինչպիսին Ղարաբաղի հայերն են, ոչ մի տեղ չկա<sup>5</sup>:

Հաշվի առնելով մելիքությունների դերն ու նշանակությունը՝ Պետրոս կայսրը ակտիվ բանակցություններ է ծավալում Արցախի մելիքների հետ՝ խոստանալով օգնել հայերին վերականգնելու իրենց պետականությունը: Հարկ է նշել, որ Արցախում պետականության զարգացման գործում իր ուրույն տեղն ու դերն է ունեցել նաև լեռնաստանի հոգևոր վեհապետը: XVIII դարի 20-ական թվականների ազատագրական պայքարի շրջանում Արցախի կաթողիկոսն էր Եսայի Հասան-Ջալալյանը, որի կաթողիկոսության օրոք Գանձասարի եկեղեցին դառնում է ազատագրական շարժման քաղաքական կենտրոնն ու շարժիչը, լեռնաստանի հոգևոր ու աշխարհիկ տերերի այն հավաքատեղին, որտեղից մելիքները ստանում էին գործելու ուժ և ուղղություն: Այդ տարիներին Գանձասարը կարծեք թե դարձել էր քաղաքական կենտրոն և իշխողների մի խորհրդարան, ուր դիվանագիտական հարաբերություններ էին մշակվում և ռազմական ծրագրեր քննվում: Հատկանշական է, որ Եսային, բացի հոգևոր վեհապետ լինելուց, հանդիսանում էր նաև Արցախի մելիքների զինված ուժերի գերագույն հրամանատարը:

1722թ. Պետրոս կայսրը արշավանք է ձեռնարկում դեպի Պարսկաստանին ենթակա շրջաններ, այդ թվում և Արցախ՝ նախապես տեղեկացնելով, որ հայերն ու վրացիները միավորվեն ու սպասեն մոտեցող ռուսական զորքերին, միանան ու վերջնականապես ազատագրվեն օտարի գերիշխանությունից: Սակայն հայերի սպասելիքները չեն իրականանում, կայսրն անակնկալ ընդհատում է արշավանքն ու ետ վերադառնում:

Մնալով միայնակ՝ հայկական զինված ուժերը ազատագրական կռիվների միջոցով Արցախից դուրս քշեցին պարսկական վարչակազմին ու զորամասերին: 1722թ. վերջին արդեն ամբողջ Արցախն ազատագրված էր պարսկական իշխանության մնացուկներից: Տեղական կառավարումն անցավ հայերի ձեռքը, վերացան պարսկական կառավարման ու հարկային համակարգերը: Շուրջ 6 տարի՝ 1722-1728թթ., Արցախի գավառներն այլևս հարկ չէին վճարում պարսիկ կամ թուրք բռնակալներին<sup>6</sup> և ունեին ինքնիշխան կարգավիճակ<sup>7</sup>:

Մի կողմից խոստումներ տալով հայերին, մյուս կողմից հայերից գաղտնի Պետրոս կայսրը շտապում է դաշնագիր ստորագրել Օսմանյան Թուրքիայի հետ: 1724թ. հունիսին նրանց միջև կնքվում է պայմանագիր, ըստ որի Անդրկովկասը, այդ թվում և Արցախը, անցնում է Թուրքիայի տիրապետության ներքո, իսկ մերձկասայան շրջանները՝ Ռուսաստանի: Սակայն Արցախի ժողովրդի կամքը ոտնահարելով, նրանից գաղտնի կնքված պայմանագիրն անզոր է լինում տնօրինելու երկրամասի ձակատագիրը: Մելիքները բազմիցս ջարդ են տալիս Արցախը

<sup>5</sup> Ածի յի՛ ի - ծօոոոեծձ ի օ՛րի՛ թձի՛ եյ՛ ա ի՛ ձձա՛ի՛ ե օձձօձ՛ XVIII ձձեձ, ոոի՛ ժի՛ ե՛ ձի՛ եօի՛ ձի՛ օ՛ի՛ ձ, օ. II, . II, Աձձձձի՛, 1967ձ., ո. 255.

<sup>6</sup> Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 141:

<sup>7</sup> Բակուր Կարապետյան, Գյուլիստան նամե, Մեծ Կուսնք, գիրք I, Երևան, 2005թ., էջ 145, (այսուհետև՝ Բ. Կարապետյան):

նվաճելու հրաման ստացած թուրքական կանոնավոր զորքերին: Այս ամենի մասին թուրքական իշխանությունները 1729թ. բողոքի նոտա են ուղարկում Ռուսաստան, հայտնելով, որ պայմանագրով Արցախն իրենց է հանձնված «...սակայն այդ երկիրը շատ ամուր է, ու ժողովուրդը բոլորովին չի հպատակվում»<sup>8</sup>: Սա խոսում է այն մասին, որ երկու խոշոր տերությունների փոխհարաբերությունների մեջ պաշտոնապես ճանաչվել է Արցախի փաստացի անկախությունը: Ողջ Անդրկովկասում իր տիրապետությունը հաստատած Օսմանյան թուրքիան այդպես էլ չկարողացավ նվաճել Արցախը:

XVIII դարի կեսերին քաղաքական իրավիճակը վերստին փոխվում է Պարսկաստանում: Այդ երկրի հյուսիսային կողմերում տարածված թուրքալեզու քոչվոր անասնապահական ցեղերից մեկի մահմեդական սարջալլու ցեղի առաջնորդ Փանահը, իր իսկ պատմագրի վկայությամբ, պարսից Նադիր շահի կողմից դատապարտվելով գլխատման, իր ցեղակիցների հետ միասին 1738թ. Պարսկաստանից փախչում է և գալիս Արցախ: Գրեթե 15 տարի Արցախում վարելով թափառական կյանքը, Փանահը, աստիճանաբար նենգ ու խարդախ միջոցներով հպատակեցնելով իր ցեղակիցներին, պարսից Նադիր շահին փոխարինած Ադիլ շահի կողմից 1752թ. նշանակվում է Արցախի խան՝ նստավայր ունենալով ներկայիս Շուշի քաղաքի ամրոցը: Նշենք, որ Փանահը առաջին մահմեդականն էր, որը բնակություն էր հաստատում Արցախում:

Շուշիում հաստատվելուց հետո Արցախի մելիքներն իրենց զինված ուժերով պարբերաբար հարձակումներ են գործում նրա դեմ, որպեսզի նրան դուրս քշեն Արցախից: Ահեղ պատերազմները շարունակվում են մոտ 20 տարի: Ի վերջո մելիքների և Փանահի միջև կնքվում է հաշտություն հետևյալ պայմանով՝ Փանահը մնում էր Շուշի բերդի տերը՝ առանց իրավունք ունենալու միջամտելու մելիքների ներքին գործերին: Իր խանության շրջանում 1752-1763թթ. Փանահը Պարսկաստանի հյուսիսային շրջաններից, Վրաստանից և այլ տեղերից Արցախ գաղթեցրեց փյուսյան, կարաչարլի, ջինլի, դեմիրչի-հասանլու, դըզըլ-հաջիլի, սաֆի-քյուրդ, բոյ ահմեդլի, սահաթլի, քենգերլու և շատ այլ թուրք-թաթարական քոչվոր ու կիսավայրենի ցեղերի և բնակեցրեց հիմնականում Քարվաճառի՝ ներկայիս Շահումյանի և Լաչինի՝ ներկայիս Քաշաթաղի շրջաններում՝ ըստ երևույթին նպատակ ունենալով օղակել Արցախն ու այդպիսով կտրել մայր Հայաստանից:

Հազար անգամ փառք Աստծո, որ 1991-1994թթ. արցախյան հերոսամարտի շնորհիվ հաջողվեց մաքրել ողջ Արցախը ադրբեջանցիներ հորջորջվող, իսկ իրականում կոլկասյան թաթարների ժառանգների մնացուկներից:

Պարսկաստանի կողմից հովանավորվող Փանահ խանի, նրա հետնորդների ու ցեղակիցների դեմ պայքարում հայերի հույսը վերստին կապվում է Ռուսաստանի օգնության հետ: 1760-ական թվականներին նորից ակտիվանում է հայ ազատագրական միտքը, և Հայաստանի անկախության վերականգնման գործում կրկին կարևոր դեր է ստանում Արցախը:

Հայկական պետականության վերականգնման ակնկալիքներով էլ Արցախի մելիքները, գործակցելով Գանձասարի կաթողիկոս այս անգամ արդեն Հովհաննես Հասան-Ջալալյանի հետ, սկսում են բազում խնդրագրեր հղել ռուսաց արքունիք: Սակայն այդ նամակները մոտավորապես 20 տարի հիմնականում մնում են անպատասխան, կամ առավելագույնը, որ արքունիքն անում էր, դա անորոշ բովանդակությամբ նամակներով պատասխանելն էր, մինչև որ 1780-ական թվականների սկզբներից Ռուսաստանի արտաքին քաղաքական ծրագրերի մեջ վերստին կարևորվեց հայերի դերը: Կայսրությունը ձգտում է ընդլայնել իր հարավային սահմանները և, քանի որ հայ իրականության մեջ ռազմաքաղաքական կազմակերպված ուժ ներկայացնում էին Արցախի մելիքությունները, ուստի քանիցս պատվիրակներ են ուղարկվում հենց նրանց մոտ:

Արշավանք ձեռնարկելու նպատակով ռուս նշանավոր զորավար Ալեքսանդր Սուվորովը մանրամասն տեղեկություններ է պահանջում ու ստանում Արցախի զինուժի, բնական ու

<sup>8</sup> Ади́йî -дооһөөä î òí î øáí èý a î äðáí é òðäòè XVIII ääèä, náí ðí èè äí èòí áí òí ä, ò. III, Äðäááí , 1978ä., ñ. 20.

մարդկային ռեսուրսների, նյութական այլևայլ հնարավորությունների նույնիսկ բուսական ծածկի մասին: Նա անձամբ կազմում է Հայաստանի քարտեզը, որի վրա կատարում է հետևյալ գրառումը. «Ղարաբաղի մելիքությունները, որտեղ հայերն ապրում են սեփական իշխանության ներքո»<sup>9</sup>: Գրառումը թույլ է տալիս ասել, որ մելիքությունները շարունակում էին գոյատևել որպես որոշակի պետական կազմավորում:

Ռուսական արքունիքում Հայաստանի անկախության վերականգնման առաջին քայլը համարվում էր Արցախի ինքնուրույն մարզի ստեղծումը: Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա II-ի կողմից մելիքներին տրված խոստման համաձայն՝ կայսրության փաստացի տնօրեն իշխան, գեներալ Գրիգորի Պոտյոմկինը 1783թ. ապրիլի 6-ին Կովկասի կառավարիչ և ռուսական զորքերի հրամանատար Պավել Պոտյոմկինին տալիս է հետևյալ հրամանը. «Շուշիի Իբրահիմ խանին (խոսքը Փանահ խանի որդու մասին է, ով հոր մահից հետո հաջորդել է նրան - Ս. Հ.-Ջ.) պետք է տապալել, որովհետև սրանից հետո Ղարաբաղը պետք է կազմի հայկական անկախ, բացի Ռուսաստանից ոչ ոքի չենթարկվող մի մարզ: Ղուք այնտեղ գործադրեցեք ամեն ջանք, որպեսզի այս նոր մարզը կազմակերպվի ժողովրդի համար ամենաձեռնտու ձևով: Այս միջոցով է, որ հայկական մնացած ուժեղ նահանգներն էլ կամ կհետևեն նրա (Արցախի – Ս. Հ.-Ջ.) օրինակին, կամ մեծ թվով հայեր կգան Ղարաբաղ»<sup>10</sup>:

Արցախի նորաստեղծ իշխանությունը պետք է հիմք դառնար ապագա հայկական միասնական պետության վերստեղծման համար: Կայսրուհուն ներկայացրած զեկույցի մեջ իշխան Պոտյոմկինը հայտնել է հետևյալ համոզմունքը. «...Արցախը, որտեղ ապրում են հայեր, պետք է ունենա ազգային կառավարություն և այդ միջոցով Ասիայում կվերականգնվի մի քրիստոնեական պետություն՝ համաձայն ձեր կայսերական մեծության խոստումների, որոնք իմ միջոցով հաղորդված են հայոց մելիքներին»<sup>11</sup>: Փաստորեն, սա առաջին պետական փաստաթուղթն է, որտեղ ժամանակի խոշոր տերություններից մեկը ճանաչում է երկրամասի բնիկ ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ ընդգծելով, որ Արցախը պետք է ունենա ազգային կառավարում, կազմի հայկական անկախ մարզ:

Հիշյալ փաստաթուղթը, լիովին վկայում է հայկական հողի վրա ազգային անկախ պետականություն ունենալու այսօրվա Արցախի Հանրապետության պատմական իրավունքի մասին:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Շուշիի խանը չնայած Պարսկաստանի կողմից նշանակված կառավարիչ էր, սակայն լինելով թյուրքական ցեղից, գաղտնի կապեր էր պահպանում Օսմանյան թուրքիայի հետ, վերջինիս օգնությամբ Պարսկաստանից անկախանալու և թուրքիային հպատակվելու նպատակով: Իսկ հեց մոտենում էր ռուսական վտանգը, նա վերջիններիս կողմն էր անցնում, ուստի վստահություն չէր ներշնչում ռուսներին:

Այդպես ստեղծվեց մի անորոշ վիճակ, որը շարունակվեց շուրջ երկու տասնամյակ, մինչև որ Ռուսաստանն իրական հնարավորություն ունեցավ իր զորքերն առաջ շարժելու և իր ներկայությունն Արցախում իրապես ապահովելու համար: 1804թ. ռուսական զորքերը գրավեցին և կայսրությանը միացրեցին Ղարաբաղի խանությունը: Այդ նվաճումը հաստատվեց 1813թ. ռուս-պարսկական պայմանագրով, որը կնքվեց Արցախի անառիկ բերդերից մեկում՝ Գյուլիստանում: Գյուլիստանի պայմանագիրը վկայում է, որ Արցախն առանձին պետական միավորի կարգավիճակով անցել է Ռուսաստանին: Մի որոշ ժամանակ Պարսկաստանը փորձեր կատարեց ետ գրավելու Արցախը, սակայն ապարդյուն: 1828թ. փետրվարի 10-ին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա Թուրքմենչայ գյուղում կնքվեց ռուս-պարսկական երկրորդ պայմանագիրը, որով Արևելյան Հայաստանն, այդ թվում նաև Արցախը, վերջնականապես անցավ Ռուսաստանի տիրապետության տակ: Նույն թվականի մարտին ցար Նիկոլայ I

<sup>9</sup> А. Ноаі ді а, Аі еоі аі оу, о. II, I і неаа, 1951а., н. 224-225.

<sup>10</sup> Ади ыі і -доһһеа і оі і оаі еу а XVIII ааеа, 1760-1800аа., о. IV, Адаааі, 1990а., н. 239.

<sup>11</sup> Ади ыі і -доһһеа і оі і оаі еу а XVIII ааеа, 1760-1800аа., о. IV, Адаааі, 1990а., н. 241.





վրա: Բազմազգ ու հետամնաց կայսրության մեջ կուտակված բոլոր հակասությունները հրապարակ ելան ու բորբոքվեցին քաղաքական տաբեր ուժերի կողմից:

Օգտվելով կազմակերպված իշխանության չգոյության հանգամանքից՝ Օսմանյան Թուրքիան 1918թ. սեպտեմբերին կանոնավոր բանակով ներխուժեց Անդրկովկաս՝ ուղղություն վերցնելով դեպի Բաքու՝ ճանապարհին շարունակելով հայերի ցեղասպանությունը, որ զանգվածաբար սկսել էր 1915թ.: Թուրքական հրամանատարությունը տապալեց Բաքվի օրինական իշխանությունը և այն հանձնեց տեղի մուսուլմաններին, ահա այսպես պատմության մեջ առաջին անգամ աշխարհի քաղաքական քարտեզի վրա հայտնվեց թուրքամետ, խամաճիկային, նախկինում գոյություն չունեցող «Ադրբեջան» պետությունը:

Թուրքական հրամանատարությունը տեղի մուսուլմաններին տվեց ոչ միայն պետություն, այլև՝ անվանում: Բանն այն է, որ մինչև թուրքական բանակի ինտերվենցիան Բաքու, երբեմնի Փանահ խանի ու նրա հետնորդների ժառանգներն իրենց կոչում էին մուսուլմաններ, իսկ այլոց կողմից անվանվում էին Կովկասի թաթարներ: 1918թ. նրանց առաջին անգամ ադրբեջանցիներ անվանեց թուրքական բանակի հրամանատար, հայոց ցեղասպանության պարագլուխներից մեկի՝ Էնվեր փաշայի կրտսեր եղբայրը՝ Նուրի փաշան:

Իշխանությունը տեղի թուրքերին հանձնելուց հետո, թուրքական բանակն ու թուրք խաժամուժը, երեք օրերի ընթացքում Բաքվում ցեղասպանության ենթարկեց ավելի քան 30 հազար հայ: Հրատապ դարձավ արցախահայության ինքնապաշտպանության խնդիրը, որն ամենևին չէր մտահոգում Ռուսաստանի ժամանակավոր կառավարությանը: Հայերին մնում էր ապավինել սեփական ուժերին, կազմակերպել ինքնապաշտպանություն՝ թուրքական ագրեսիայից ու նրանց կողմից հրահրվող տեղական մահմեդականներից պաշտպանվելու համար:

Իրադարձությունների նման ընթացքը Արցախի հայությանը ստիպում է առավելագույնս օգնագործել քաղաքական բոլոր միջոցները: Կարևոր դեր են կատարում ինքնակազմակերպման ու ինքնակառավարման ավանդույթները: Արցախի բոլոր գյուղերն ունեին հասարակական վճիռ կայացնելու մշակված կարգ, ընդհանուր խնդիրները համատեղ լուծելու ժողովատեղ: Անհրաժեշտության դեպքում, ըստ մշակված կարգի, ընտրվում էին պատվիրակներ, ուղարկվում Շուշի՝ ժողով-հավաքների, որոնք էլ իրենց հերթին ընտրում էին Արցախի ինքնակառավարման մարմիններ: Եվ ահա 1917թ. դեկտեմբերի 23-ին Շուշիում հրավիրվեց Արցախի բոլոր կուսակցությունների ու քաղաքական հոսանքների ժողով<sup>13</sup>: Ժողովն ընտրում է 14 հոգուց բաղկացած Միջկուսակցական Բյուրո, հետագայում այն կոչվել է նաև Խորհուրդ, իսկ անդամները՝ Կոմիսարներ:

Պետք է ասել, որ Միջկուսակցական Բյուրոն կամ Խորհուրդը Անդրկովկասի տարածքում անդրանիկ պետական կազմավորման՝ ինքնիշխան Արցախի գործադիր մարմինն էր, իսկ օրենսդիրը լինելու էր առաջիկայում հրավիրվելիք Արցախի հայության համագումարը: Միջկուսակցական Բյուրոն իր կառուցվածքով ու դերակատարումով իրականացնում էր պետությանը բնորոշ հիմնական գործառույթները: Պատմական ավանդույթների հիման վրա, ժողովրդավարության սկզբունքով Արցախում կատարվեցին քայլեր, որոնք կարող են արժևորվել իբրև Անրկովկասում ազգային հանրապետությունների ձևավորման ուղղությամբ առաջին քայլեր: Ձևավորված կառույցները և նրանց կատարած գործառույթները թույլ են տալիս այդ ամենը գնահատել որպես առաջին ազգային պետական կազմավորում Հարավային Կովկասում:

1918թ. հուլիսի 22-ին, Միջկուսակցական Բյուրոն կամ Խորհուրդը Շուշիում հրավիրում է արցախահայության առաջին համագումարը, որն ընտրում է Ազգային Խորհուրդ և ժողովրդական Կառավարություն: Համագումարը քննելով հայության ներկա վիճակը՝ արտահատում է իր հստակ դիրքորոշումն ու ընդունում հետևյալ որոշումը. «...Ղարաբաղը

<sup>13</sup> Եղիշէ Իշխանեան, Լեռնային Ղարաբաղ, 1917-1920, Երեւան, 1999թ., էջ 81:

կազմում է Արարատյան Հանրապետության մաս, թեև տիրող պայմանների շնորհիվ կտրված է նրանից, սակայն պիտի ջանալ կապ հաստատել ու միանալ նրան: Ժողովրդական Կառավարությունը պիտի ունենա երկիրը կառավարելու բոլոր իրավունքները, մինչև միանալը Հայաստանի Հանրապետությանը»<sup>14</sup>:

Արցախի ժողովրդական Կառավարության իրավասությունը տարածվում էր ողջ Արցախի՝ պատմական Խանսայի հինգ մելիքությունների և Քանձակի գավառի հայկական լեռնային գյուղերի վրա:

Ի պատասխան համագումարում ընդունված որոշմանը, Ադրբեջանի կառավարությունը, հենվելով թուրքական զենքի ուժի վրա, փորձեց ուժով Արցախը մտցնել Ադրբեջանի կազմի մեջ: 1918թ. սեպտեմբերի սկզբին թուրքական կանոնավոր բանակի զորամասերը հայտնվեցին Արցախի սահմաններում: Թուրքական հրամանատարությունը, Ադրբեջանին հպատակվելու և զինաթափ լինելու պահանջներով, վերջնագիր ներկայացրեց Արցախի ժողովրդական Կառավարությանը: Որպես իրավական փաստաթուղթ, քննության առնելով այս վերջնագիրը, կարող ենք ասել, որ սրանով թուրքական կողմը, փաստորեն, ճանաչում էր Արցախի անկախությունն ու ժողովրդական Կառավարության իրավունքներն՝ իբրև երկրամասի գործադիր իշխանություն: Վերջնագրին պատասխան տալու նպատակով սեպտեմբերի 6-ին հրավիրված Արցախի հայության երկրորդ համագումարը կրկին մերժում է թուրքական հրամանատարության և ադրբեջանական կառավարության պահանջները:

Պետք է ասեն, որ մեզանից ավելի քան 90 տարի առաջ տեղի ունեցած այդ խառնիճաղանջ իրադրությունների ժամանակ ադրբեջանաարցախյան հակամարտության խնդիրը գտնվել է նաև Ազգերի Լիգայի ուշադրության կենտրոնում: 1920թ. դեկտեմբերի 1-ին Ազգերի Լիգայի հինգերորդ կոմիտեն, արձագանքելով Ադրբեջանի տարածքային պահանջներին ու հակահայկական զանգվածային ջարդերին, միաձայն դեմ արտահայտվեց Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության անդամակցությանը Ազգերի Լիգային: Միևնույն ժամանակ Լիգան, մինչև հակամարտության վերջնական կարգավորումը, Արցախը ճանաչել է որպես վիճելի տարածք, որի հետ համաձայնվել են հակամարտության մեջ ընդգրկված բոլոր կողմերը, այդ թվում նաև Ադրբեջանը: Այստեղից հանգում ենք մի պարզ հետևության. 1918-1920թթ.՝ Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության ձևավորման շրջանում, նրա սուվերենությունը չէր տարածվում Արցախի վրա:

1920թ. ապրիլի 28-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի միջոցով Բաքվում հաստատվեց խորհրդային իշխանություն, որը սկսեց տարածել նոր կարգերը Ադրբեջանի բոլոր բնակավայրերում: Սակայն խորհրդային կարգերի հաստատումով ոչ մի փոփոխություն տեղի չունեցավ Արցախը Ադրբեջանին միացնելու թուրքական քաղաքականության մեջ: Ադրբեջանի հեղափոխական կոմիտեի նախագահ Նարինան Նարինանովը, Ստալինի աջակցությամբ ու հովանավորությամբ, պահանջում էր անվերապահորեն Արցախը, Նախիջևանը և Ջանգեզուրը միացնել Ադրբեջանին: Նարինանովն իր զավթողական նման պահանջը հիմնավորում էր դաշնակցական Հայաստանի հետագա հզորացումը կանխելու նկատառումով:

Հայտնվելով նոր վտանգի առջև՝ Արցախի ժողովրդական Կառավարությունն, այլ ելք չգտնելով, կամովին իշխանությունը հանձնում է տեղի բոլշևիկներին՝ լեռնաշխարհը հռչակելով խորհրդային, որպեսզի գոնե այդ կերպ պաշտպանվեր Ադրբեջանի հավակնություններից, սակայն ապարդյուն: Արցախի նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի վարած հակահայ քաղաքականության համար բնութագրական է Բաքվի կողմից Արցախի նահանգային հեղափոխական կոմիտեի նախագահ նշանակված Ա. Կարակի 1920թ. հուլիսի գրությունն՝ ուղղված տեղի բոլշևիկ գործիչներին. «Մենք գիտենք, որ մեր գործերը ջախջախվել են ու

<sup>14</sup> Եղիշէ Իշխանեան, Լեռնային Ղարաբաղ 1917-1920, Երևան, 1999թ., էջ 174:

նահանջել, բայց այսօր գործի փոխարեն մեր փողերն են հրաշքներ կատարում... Մի կողմ թողեք մարդասիրությունը, դրանով չի կարելի պետություն ստեղծել, երկրներ նվաճել: Կովողներով հարուստ նշանավոր տեղերում, հայերին թուլացնելու նպատակով սպանեցեք մի ռուս զինվորի և մեղադրեք հայերին: Գիտե՞ք ինչ կանեն նրանց ռուսները»<sup>15</sup>: Այդպես գործել և շարունակում է գործել Ադրբեջանը:

1920թ. դեկտեմբերի 1-ին, երբ դաշնակցական Հայաստանի հզորացմանը նպաստելու Ադրբեջանի վերոհիշյալ պատճառաբանությունը վերացել էր, Բաքվի պրովետարիատը՝ հանձին Ադրբեջանի հեղափոխական կոմիտեի նախագահ Նարիման Նարիմանովի, հատուկ դեկլարացիայով ողջունելով Հայաստանում խորհրդային կարգերի հատատումը, Արցախը ճանաչեց խորհրդային Հայաստանի բաղկացուցիչ մաս: Ադրբեջանի հեղափոխական կոմիտեի որոշումը ողջունում են պետական ու կուսակցական մի շարք գործիչներ, այդ թվում նաև Իոսիֆ Ստալինը:

Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիայի հիման վրա և ՌԿԿ Կովկասյան բյուրոյի 1921թ. հունիսի 3-ի պլենումի որոշմամբ, 1921թ. հունիսի 19-ին Հայաստանի հեղկոմը «խարհրդային Հայաստան» օրաթերթում հրապարակած դեկրետով ազդարարում էր, որ այսուհետև Արցախը հանդիսանում է խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը:

Սակայն մի քանի ամիս անց, Նարիման Նարիմանովը, որ ստորագրել էր խորհրդային Հայաստանին հղած հռչակագիրը, մասնակցել Կովկասյան բյուրոյի 1921թ. հունիսի 3-ի պլենումի որոշման ընդունմանը, դեմ է արտահատվում Արցախը Հայաստանին վերամիավորելու մասին որոշմանը: Նա սպառնալից պնդում էր, որ հարցը հոգուտ Ադրբեջանի չլուծվելու դեպքում, հետևանքների համար Ադրբեջանի հեղկոմը պատասխանատվություն չի կրելու:

Նարիման Նարիմանովի և Ստալինի մասնակցությամբ ՌԿԿ Կովկասյան բյուրոյի պլենումը 1921թ. հուլիսի 4-ին, լսելով խնդրո առաջկա հարցը, ձայների մեծամասնությամբ որոշում է Արցախը վերամիավորել խորհրդային Հայաստանին: Նարիմանովը բողոքում է նման որոշման դեմ և պահանջում, որ հարցը տեղափոխվի ՌԿԿ Կենտրոնական Կոմիտե: Եվ չնայած Կովկասյան բյուրոն որոշում է ընդառաջել Նարիմանովի պահանջին, սակայն անսպասելիորեն հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, նորից գումարվում է Կովկասյան Բյուրոյի նիստը, որի ժամանակ հարցն առանց քննարկելու և քվեարկության դնելու կամայականորեն որոշվում է Արցախը «ինքնավարության լայն իրավունքներով» միացնել խորհրդային Ադրբեջանին: Միանգամայն պարզ է, որ նիստը գումարվել և որոշումը ընդունվել է Ստալին-Նարիմանով գործարքի և Ստալինի կողմից գործադրված ճնշման պայմաններում: Սա, փաստորեն, եղել է Արցախի բռնազավթում, քանզի կուսակցական այդ մարմինը տարածքային հարցեր լուծելու իրավունք չի ունեցել: Աշխարհի դիվանագիտական պրակտիկայում չկա այնպիսի մի դեպք, երբ սուվերեն հանրապետությունների միջև սահմանային հարցերը լուծվեն ոչ թե դիվանագիտական ճանապարհով, այլ կուսակցական որոշումներով:

Արցախին ինքնավարությունից զրկելու նպատակով խորհրդային Ադրբեջանի իշխանությունները շուրջ երկու տարի դիմեցին ամեն տեսակի բռնության ու կեղծիքի: Խեղաթյուրվեցին հողաչափության ու մարդահամարի արդյունքները, կազմվեցին կեղծ փաստաթղթեր այն մասին, թե իբր Արցախի ժողովուրդը ինքնավարություն չի ցանկանում, անհարկի ձգձգվեցին վերադաս բուլշևիկյան մարմինների հրահանգների կատարումը և այլն:

Սակայն, այնուամենայնիվ պատմական տվյալ ժամանակահատվածում ևս Արցախահայությունը կարողանցել է պահպանել իր պետականությունը այս անգամ արդեն ինքնավար մարզի կարգավիճակով:

Վերջապես 1923թ. հուլիսի 7-ի դեկրետով Բաքուն, խախտելով Կովկասյան բյուրոյի առանց այն էլ ապօրինի որոշումը, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հիմնեց Արցախի

<sup>15</sup>Մի Օսմի աօեի 1 աեւի այ Ի Ի Ի Ի սս XI աժի եե ա աի ծւսա՞ չա Ի Ի աա՞ո ո՞ի աա՞ոնեի է աեա՞ո՞ե ա Աճա՞աաեա՞աի ա, Աաեօ, 1989ա., ռ. 24.

տարածքի միայն մի մասի վրա՝ նրանից դուրս թողնելով Քարվաճառը, Քաշաթաղը, Շահունյանը, Կովսականը և այլն: Ինքնավարությունը ստեղծվեց ըստ էության ոչ թե ամբողջ Արցախում, այլ նրա միայն կենտրոնական մի փոքր շրջանում, անջրպետված Հայաստանից, ամբողջությամբ կղզիացած Ադրբեջանի կազմի մեջ, գրկված կենսապահովման ինքնուրույն հնարավորություններից:

Կովկասյան բյուրոյի 1921թ. որոշմամբ ԼՂԻՄ-ը պետք է ներառեր ոչ միայն այն տարածքները, որ այսօր գտնվում են Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո:

Ադրբեջանի կողմից օկուպացված են մնում Արցախի կենտրոնական ու հյուսիսային շրջանները: Այստեղից էլ սկիզբ է առնում լայնորեն շրջանառվող այն պնդման անհեթեթությունը, թե հայերն Արցախի շուրջ գրավել են տարածքներ և այն դարձրել անվտանգության գոտի: Արցախի Հանրապետությունն այսօր Արցախից դուրս կամ նրա շուրջ վերահսկվող տարածքներ չունի:

Սակայն Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ հասկացությունն այլևս պատմությանն է պատկանում, քանզի 1988թ. սկիզբ առած հայության արդար պահանջն, անցնելով պատերազմի, գրկանքների ու անդառնալի կուրուստների բովով, պսակվեց հաջողությամբ: 1991թ. սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահունյանի շրջանային խորհուրդների բոլոր մակարդակների պատգամավորների մասնակցությամբ համատեղ նստաշրջանը Հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի հռչակման մասին»: Ավելի քան երեք ամիս անց՝ 1991թ. դեկտեմբերի 10-ին, տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որտեղ ժողովրդի ավելի քան 99%-ը կողմ արտահայտվեց Արցախի Հանրապետության անկախությանը: 1992թ. հունվարի 6-ին Արցախի Հանրապետության նորընտիր Գերագույն Խորհուրդն ընդունեց Հռչակագիր «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին», որով Արցախի ժողովուրդը բարձրացրեց իր ազգային պետական կարգավիճակը: Իսկ 2006թ. դեկտեմբերի 10-ին ընդունված Սահմանադրությունը նոր որակ հաղորդեց արցախյան դարավոր պետականության շինարարությանը:

Մերօրյա Արցախի Հանրապետությունն ասպարեզ է իջել Արցախում անընդմեջ գոյատևած հայկական անկախ ու կիսանկախ պետականությունների՝ Արցախի թագավորության, Խաչենի իշխանության, Արցախի մելիքությունների, ժողովրդական Կառավարության, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժառանգական գծի վրա:

Արցախի Հանրապետությունը, որի արմատները հասնում են դարերի խորքը, ապահովում է կյանքի բնականոն ու անվտանգ հարատևումը երկրամասում և հանդիսանում հուսալի երաշխիք Արցախի գերյալ տարածքների ազատագրման համար: Արցախի Հանրապետությունը կայացած պետություն է, որն իր առջև խնդիր է դրել հասնել միջազգային ճանաչման, հուսանք, որ այդ բաղձալի օրը հեռու չէ, սակայն կարծում են, որ այդ ուղղությամբ առաջին քայլն ինքներս պետք է կատարենք:

Ամփոփելով խոսքս՝ ցանկանում են հիշեցնել հայտնի իրողություն, որ Արցախում երբեք ճորտություն չի եղել: Այս հողի վրա շինականը իշխանի, մելիքի հպատակն է եղել և ոչ թե ճորտը: Մելիքն իր հպատակին միայն կառավարել է: Եվ դրա շնորհիվ է, որ այդ շինականն անձնուրաց կերպով պաշտպանել է իր հայրենի հողը: Մելիքի գործն էլ վարձու չի եղել, այն համալրվել է իր հպատակներից, յուրաքանչյուր տուն կամավոր տվել է մեկ զինվոր: Ահա սրանք են այս հողի վրա հայ պետականության հարատևման գործոնները:

Ահա այսպես, Արցախը, անցնելով պետականության շինարարության դարերի ճանապարհ, Թագավորությունից հասնել է մինչև Հանրապետություն:

ՍՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ

Քաղաքագիտության մագիստրոս,

ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանի օգնական